Պատմության օլիմպիադայի մարզային փուլ (2025-2026 ուստարի)
9-րդ դասարան (տևողությունը՝ 120 րոպե)

Ընտրովի պատասխանով հարցեր (յուրաքանչյուր ճիշտ պատասխան 0,5 միավոր), ճիշտ պատասխանը վերցրե՛ք օղակի մեջ

1. Ո՞ր թվականին թուրքական դատարանը մահապատիժ սահմանեց հայերի կոտորածների կազմակերպիչների՝ Թալեաթի, Էնվերի, Ջեմալի և Նազըմիի համար:
1) 1918թ. 2) 1922 թ. 3) 1919 թ. 4) 1920 թ.

2. Ո՞վ է եղել 89-րդ Թամանյան դիվիզիայի հրամանատար:
1) Հովհաննես Բաղրամյանը 2) Արմենակ Խանփերյանցը
3) Նվեր Սաֆարյանը 4) Համազասպ Բաբաջանյանը

3. Ո՞ր բնակավայրի հայությունն է ինքնապաշտպանական կռիվներ մղել 1915թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին Մկրտիչ Յոթնեղբայրյանի գլխավորությամբ:
1) Սասունի 2) Վանի 3) Ուրֆայի 4) Սուեդիայի

4. Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում ՀԽՍՀ-ից ինչքա՞ն հայ է կռվել խորհրդային բանակում:
1) 200 հզ. 2) 300 հզ. 3) 500 հզ. 4) 600 հզ.

5. Ի՞նչ էր անվանվում բերդերում տեղակայվող զորքը:
1) կայազոր 2) արքունի գունդ 3) համիդիե գունդ 4) հեծելազոր

6. Ո՞ր թվականին է Տրայանուս կայսրը ներխուժել Հայաստան:
1) 54 թ. 2) 62 թ. 3) 114 թ. 4) 117 թ.

7. Հայաստանի ազատագրական պայքարի համատեքստում հայոց ո՞ր կաթողիկոսի կողմից 1677 թ. հրավիրվեց գաղտնի ժողով:
1) Հակոբ Դ Ջուղայեցի 2) Եսայի Հասան-Ջալալյան
3) Ստեփանոս Ե Սալմաստեցի 4) Սիմեոն Երևանցի

8. Ո՞ր թվականին Ռուսաստանը միացավ Անտանտին:
1) 1893 թ. 2) 1895 թ. 3) 1905 թ. 4) 1907 թ.

9. Վերածննդի դարաշրջանի ո՞ր գործիչն է «Աստվածային կատակերգության» հեղինակը:
1) Ջովանի Բոկաչչո 2) Դանթե Ալիգիերի
3) Ֆրանչեսկո Պետրարկա 4) Նիկոլո Մաքիավելի

10. Ո՞րտեղ է ձևավորվել հռոմեական քաղաքակրթությունը:
1) Բալկանյան թերակղզում 2) Ապենինյան թերակղզում
3) Արևելահռոմեական կայսրությունում 4) Լատինական կայսրությունում

Կարճ պատասխանով առաջադրանքներ

11. Ընտրեք այն պնդումները, որոնք ճիշտ են *(յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 0,5 միավոր, ընդհանուր 1,5 միավոր)*:

ա. 1895թ. մայիսի 11-ին Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի կողմից Աբդուլ Համիդ II-ին հանձնված Մայիսյան բարենորոգումների ծրագրի համաձայն՝ բարենորոգումները պետք է իրականացվեին հայկական 6 նահանգներում Էրզրում (Կարին), Վան, Բիթլիս, Դիրարբեքիր, Խարբերդ և Սեբաստիա:

բ. Փարիզի խորհրդաժողովում արևմտահայերին և գաղթաշխարհին ներկայացնող Ազգային պատվիրակությունը գլխավորում էր Ավետիս Ահարոնյանը:

գ. 1880թ. հրամանով Աբդուլ Համիդ II-ը արգելել էր պաշտոնական գրագրություններում Հայաստան անվանման օգտագործումը:

դ. 1903թ. Սասունի Գելիեգուզան գյուղում ստեղծված զինվորական մարմինը գլխավորում էր Դրոն (Դրաստամատ Կանայան):

ե. 1919 թ. ՀՅԴ 9-րդ ընդհանուր ժողովը մշակեց Հայոց ցեղասպանության կազմակերպիչներին պատժելու ծրագիրը, որը կոչվեց «Նեմեսիս»:

զ. 1921թ. հունվարին Փարիզում հրավիրվել է խորհրդաժողով, որի նպատակը պարտված Քառյակ միության պետությունների հետ հաշտության պայմանագրի կնքումն էր ու նոր աշխարհակարգի ձևավորումը:

է. Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում շուրջ 150 հզ. հայ ծառայել է Ֆրանսիական բանակում:

12. Թվարկվածներից որո՞նք են ճիշտ արտացոլում պայմանագրերի իրական հետևանքները *(յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 0,5 միավոր, ընդհանուր՝ 1,5 միավոր)*:

ա. Բեռլինի պայմանագրով Ռուսաստանին են անցնում Ալաշկերտի հովիտն ու Բայազետը:

բ. Ամասիայի հաշտության պայմանագրով Ռուսաստանը Թուրքիային էր վերադարձնում Արևմտյան Հայաստանը և Կարսի մարզը:

գ. Գյուլիստանի պայմանագրով Ռուսաստանին են անցնում Երևանի և Նախիջևանի խանությունները:

դ. Մոսկվայի պայմանագրով Թուրքիային են անցնում Կարսի մարզը, Սուրմալուի գավառը, Նախիջևանը փոխանցվում է Ադրբեջանին:

ե. Ադրիանուպոլսի պայմանագրով Ռուսաստանին են անցել Ախալցխան ու Ախալքալաքը:

զ. Սան Ստեֆանոյի պայմանագրով Օսմանյան կայսրությանն էին անցնում Արևմտյան Հայաստանի Կարսի, Ալաշկերտի և Բայազետի շրջանները:

է. Լոզանի պայմանագրից հետո Հայկական հարցը երկար ժամանակ դուրս է մնում միջազգային օրակարգից:

13. Տերմինների կամ հասկացությունների տրված բացատրություններից որո՞նք են ճիշտ *(յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 0,5 միավոր, ընդհանուր 1,5 միավոր)*:

ա. Պետության համար արտակարգ ծանր իրավիճակներում Հռոմում 6 ամիս ժամկետով ընտրվող արտակարգ լիազորություններով օժտված պաշտոնյան կոչվում էր կոնսուլ:
բ. Բոլշևիկները արդյունաբերական քաղաքակրթության շրջանակներում սկիզբ դրեցին մի նախագծի իրագործման, որն ընդունված է անվանել ուտոպիա:
գ. Առաջին միջազգային կազմակերպությունը, որի հիմնական նպատակը խաղաղության պահպանումն ու միջազգային համագործակցության զարգացումն էր, կոչվում էր Ազգերի լիգա:
դ. Հասարակական–քաղաքական և մշակութային շարժումը, որն սկսվել է Իտալիայում XIV դարում, կոչվում է Վերածնունդ:
ե. Գաղափարախոսությունը, որը ենթադրում էր թյուրքալեզու բոլոր ժողովուրդների միավորումը մեկ միասնական պետության մեջ, կոչվում է պանիսլամիզմ:
զ. Կիլիկյան Հայաստանում բանակի գլխավոր հրամանատարը՝ սպարապետը, կոչվում էր գունդստաբլ:
է. Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Ֆրանսիայի բանակում ստեղծված հայկական զորամիավորումը կոչվում էր «Կիլիկյան լեգեոն»:

Վերլուծական հարցեր

14. **Համապատասխանեցրե՛ք պայմանագրերը դրանց բովանդակության հետ:** *(Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 0,3 միավոր, ընդհանուր՝ 1,5 միավոր)*

Պայմանագիր	Բովանդակություն
1. Բրեստ-Լիտովսկի պայմանագիր	**ա.** Թուրքիային են զիջվում Կարսի մարզը, Սուրմալուի գավառը, Նախիջևանը փոխանցվում է Ադրբեջանին:
2. Բաթումի պայմանագիր	**բ.** Կրկնելով Մոսկվայի պայմանագրի դրույթները՝ Խորհրդային Հայաստանի կողմից հաստատում էր հայերի կորուստները:
3. Մոսկվայի պայմանագիր	**գ.** Ռուսաստանը Թուրքիային էր վերադարձնում Արևմտյան Հայաստանը և Կարսի մարզը
4. Կարսի պայմանագիր	**դ.** Հայկական հարցը միառժամանակ դուրս է մնում միջազգային օրակարգից
5. Լոզանի պայմանագիր	**ե.** Որոշվում է ՀՀ և Օսմանյան կայսրության սահմանը: Արևմտյան Հայաստանի, Կարսի մարզի, Երևանի և Թիֆլիսի նահանգների զգալի տարածքներ անցնում են Թուրքիային

1	2	3	4	5

15. **Լրացնե՛լ բացթողնված հատվածները:** *(Յուրաքանչյուրը՝ 0,5 միավոր, ընդհանուր՝ 2,5 միավոր)*

Բոլշևիկաքեմալական գործողությունների հետևանքով Հ. Օհանջանյանի կառավարությունը հրաժարական է տալիս: (1) ---------- (ո՞ւմ) գլխավորությամբ ձևավորվում է նոր կառավարություն: Հաջորդ օրը (2) ---------- (ո՞ւմ) գլխավորած պատվիրակությունը Ալեքսանդրապոլում սկսում է հաշտության բանակցությունները: (3) ------ ---------- ----- (ե՞րբ) թուրքերը իրրենց կողոպտիչ պայմանները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ վերջնագիր են ներկայացնում հայերին: Ստեղծված անել իրավիճակում (4) ------- ---------- ------ (ե՞րբ) ցերեկը Ս. Վրացյանի կառավարությունը հրաժարական է տալիս: Այս պայմաններում փաստացի դեկտեմբերի 3-ին արդեն պատշաճ լիազորություններ չունեցող Ա. Խատիսյանը ուժի կիրառման սպառնալիքի ազդեցությամբ (5) ---------- (ո՞րտեղ) ստորագրում է Հայաստանի համար ստորացուցիչ մի պայմանագիր:

16. Ներկայացրո՛ւ Առաջին աշխարհամարտի 2-ական պատճառ և հետևանք: *(Յուրաքանչյուրը՝ 0,25 միավոր, ընդհանուր՝ 1 միավոր)*

Պատճառ	Հետևանք
1.	1.
2.	2.

17. Ճանաչի՛ր նկարը և ներկայացրո՛ւ իրադարձությունը: *(2,5 միավոր)*

(1) Ո՞ր իրադարձությանն է նվիրված լուսանկարը: Ովքե՞ր էին մասնակիցները:

(2) Ե՞րբ և որտե՞ղ է այն տեղի ունեցել:

(3) Ի՞նչ փոփոխություններ առաջացրեց (նշեք 2-ը)

---

18. Աշխատանք սկզբնաղբյուրի հետ. կարդացե՛ք և պատասխանե՛ք ենթահարցերին.

«Անհավասար պայքարում հայ ժողովուրդը հաղթեց, և 1905-ի օգոստոսի 1-ին հրապարակվեց ցարի հրամանագիրը՝ հայ եկեղեցու գույքը վերադարձնելու և ազգային դպրոցները վերստին բացելու վերաբերյալ: Վճռական դերն այս հարցում, անշուշտ, Մկրտիչ Ա Խրիմյանին էր: Պատահական չէ, որ Ռուսաստանի պետական դումայի հետադեմ երեսփոխանները, կշտամբելով իշխանություններին, որ տեղի են տվել հայոց շարժման առաջ, կատաղի զայրույթով էին խոսում կաթողիկոսի մասին: Նրանցից մեկը հիշեցնում էր. «Այն դեպքում, երբ Կովկասում բոլոր մյուս ժողովուրդները երդման արարողությունը կատարում էին ռուսերենով, հայերը անհասկանալի ավանդույթի ուժով պահպանեցին այդ բանը հայերենով անելու իրավունքը»»:

1. Ո՞ր օրենքի դեմ էին պայքարում հայերը, ե՞րբ էր այն ընդունվել *(1 միավոր)*:

---

2. Ի՞նչ գործողություններ նպաստեցին, որ «Անհավասար պայքարում հայ ժողովուրդը հաղթեց»: Նշե՛ք այդ օրենքի դեմ կազմակերպված 2 գործողություն *(1 միավոր)*:

---

3. Ե՞րբ չեղարկվեց այդ օրենքը, ի՞նչ նշանակություն ունեցավ չեղարկումը (գրե՛ք 2 նշանակություն) *(1 միավոր)*:

(1) ----------

(2) ----------

Պատմության օլիպիադայի

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ պ.գ.թ. Գևորգ Կեսոյան

02.02.2026 թ.